

ՀԱՅԱԼԵԶՈՒ ԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ
ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ABSTRACT

ON THE PECULIARITIES OF TEACHING SPANISH PERSONAL PRONOUNS TO AN ARMENIAN-SPEAKING AUDIENCE

This study is dedicated to the teaching of Spanish personal pronouns. The use of personal pronouns in Spanish often appears quite complex to Armenian learners, as well as to other foreigners studying Spanish. The article thoroughly examines modern teaching methods that contribute to the effective teaching, acquisition, and correct usage of Spanish personal pronouns. The relevance of this article is conditioned by the growing demand for the Spanish language worldwide and the increasing number of learners from various national backgrounds. The article addresses the main approaches that play a key role in teaching Spanish personal pronouns and, through a learner-centered approach, make the process of mastering them more accessible.

Key Words: Spanish language teaching, personal pronouns, conjugation system, Armenian-speaking audience, Spanish culture, methods,

* e-mail: lilitsaroyan1975@gmail.com



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 10/06/2025

Revised: 17/06/2025

Accepted: 19/06/2025

© The Author(s) 2025

communicative method, interactive method, practical application, effective teaching, communication skills.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն ուսումնասիրությունը նվիրված է իսպաներենի անձնական դերանունների դասավանդմանը: Իսպաներենի անձնական դերանունների կիրառումը, հաճախ, բավականին խրթին է թվում հայ լսարանի, ինչպես նաև, իսպաներեն ուսումնասիրող այլ օտարերկրացիների համար: Հոդվածում մանրամասն քննվում են դասավանդման արդի մեթոդները, որոնք նպաստում են իսպաներենի անձնական դերանունների արդյունավետ դասավանդմանը, յուրացմանն ու ճիշտ կիրառմանը: Ներկայիս հոդվածի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ամբողջ աշխարհում բավականին մեծացել է իսպաներենի պահանջարկն ու մեծ թիվ են կազմում իսպաներեն սովորող տարբեր ազգերի մարդիկ: Հոդվածում անդրադարձ է կատարվում այն հիմնական մոտեցումներին, որոնք, առանցքային դերակատարում ունեն իսպաներենի անձնական դերանունների դասավանդման խնդրում և, ուսանողակենտրոն մոտեցմամբ, առավել դյուրին են դարձնում իսպաներենի անձնական դերանունների յուրացման գործընթացը:

Բանալի բառեր՝ իսպաներենի դասավանդում, անձնական դերանուններ, հոլովման համակարգ, հայալեզու լսարան, իսպանական մշակույթ, մեթոդներ, հաղորդակցական մեթոդ, ինտերակտիվ մեթոդ, գործնական կիրառում, արդյունավետ դասավանդում, հաղորդակցական հմտություններ:

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ЛИЧНЫХ МЕСТОИМЕНИЙ ИСПАНСКОГО ЯЗЫКА ДЛЯ АУДИТОРИИ С АРМЯНСКИМ ЯЗЫКОМ ОБУЧЕНИЯ

Данное исследование посвящено преподаванию личных местоимений испанского языка. Использование личных местоимений в испанском языке зачастую кажется довольно сложным для армяноязычных учащихся, а также для других иностранных студентов,

изучающих испанский язык. В статье подробно рассматриваются современные методы преподавания, способствующие эффективному обучению, усвоению и правильному использованию личных местоимений испанского языка. Актуальность статьи обусловлена тем, что в настоящее время наблюдается значительный рост интереса к испанскому языку во всем мире, и число изучающих его представителей разных народов постоянно увеличивается. В статье рассматриваются основные подходы, играющие ключевую роль в преподавании личных местоимений испанского языка и, благодаря обучению, ориентированному на студента, делают процесс их усвоения более доступным.

Ключевые слова: преподавание испанского языка, личные местоимения, система спряжения, армяноязычная аудитория, испанская культура, методы, коммуникативный метод, интерактивный метод, практическое применение, эффективное преподавание, коммуникативные навыки.

Յանկացած լեզու դասավանդելիս առաջանում են մի շարք մարտահրավերներ, որոնց հաղթահարման համար պահանջվում է գրագետ մոտեցում, հաշվի առնելով թիրախային խմբերն ու մշակութային առանձնահատկությունները:

Իսպաներենում քերականական մի շարք թեմաների մեջ իրենց յուրահատկությամբ առանձնանում են նաև անձնական դերանունները, որոնք պահանջում են հատուկ մշակված մեթոդաբանություն ու մոտեցում՝ հայալեզու լսարանում դրանք ավելի հասանելի ու պարզ մատուցելու համար:

Այստեղ, առաջին հերթին պետք է խոսել հարգալից **Usted** և դրա հոգնակի թվի՝ **Ustedes** անձնական դերանունների մասին, որոնք կիրառվում են հարգալից և պաշտոնական դիմելիքներում:

Հարգալից դիմելաձևն իսպաներենում դիտարկվում է՝ որպես ազգամշակութային բաղադրիչ, ինչը կարելի է բացատրել այն իրողությամբ, որ հարգանքը մեծահասակների ու պաշտոնատար անձանց հանդեպ իսպանական մշակույթի անքակտելի մաս է կազմում: Նշված ռեպյան առկա է նաև հայկական մշակույթում, քանի որ հայերենում տարեցներին, անձանոթներին ու պաշտոնյաներին դիմելիս՝ կիրառվում է **Պոպ** հարգալից ձևը, ինչը վկայում է հայկական մշակույթում հարգանքի ու դրա արժևորման մասին: Հետևաբար իսպաներենի **Usted** և **Ustedes** անձնական դերանունները բացատրելիս, հարկ է գուգահեռ անցկացնել հայերենի **Պոպ** անձնական դերանվան հետ, ինչն առավել կհեշտացնի յուրացման գործընթացը: Այստեղ հարկ է նշել և ուսանողներին պարզաբանել, որ հայերենում բացակայում է հարգալից ձևի հոգնակի թիվը՝ **Ustedes**, որն իսպաներենում կիրառվում է մի քանի հոգու հարգալից դիմելիս:

Վերոհիշյալ անձնական դերանունները բացատրելիս, արդյունավետ է կիրառել լեզվի ուսուցման դիդակտիկ մեթոդը, ինչպես նաև, քերականական մեթոդը՝ հիմնվելով դեդուկտիվ ու ինդուկտիվ մոտեցումների վրա: Քերականական մի շարք թեմաների դասավանդման ժամանակ, նշված մեթոդների արդյունավետությանն անդրադարձել են այնպիսի մեթոդաբաններ, ինչպիսիք են՝ Լոպես Մորատայան (2004), Լասարո Մորան (2004), Թորնբրի Մքոթը (1999), Պերիս Մարտինը (2000) և այլոք:

Usted և **Ustedes** անձնական դերանունները հայալեզու լսարանում բացատրելիս, հատկապես պետք է ուսանողների ուշադրությունը հրավիրել դրանց հետ կիրառվող բայերի խոնարհման վրա: Հատկանշական է, որ **Usted** (**Ղուք**) և **Ustedes** (**Ղուք**) անձնական դերանունների հետ կիրառվելիս՝ բայերը դրվում են, համապատասխանաբար, երրորդ դեմք եզակի ու հոգնակի թվերով: Ինչպես օրինակ՝

Usted puede hacerlo ahora mismo, señor.

Usted necesita presentar su pasaporte.

Ustedes fueron muy temprano ayer.

Ustedes saldrán para Madrid la semana que viene.

Շատ հաճախ, իսպաներեն սովորող ուսանողների համար խնդրահարույց է այն, որ երկրորդ դեմքի դերանվան հետ կիրառվում է երրորդ դեմքով դրված բայ: Այս պարագայում, հայալեզու լսարանում արդյունավետ է զուգահեռ անցկացնել հայերենի հետ՝ կիրառելով զուգադրական մեթոդը: Նախկինում, հայոց լեզվում նույնպես, հարգանքի չափազանց մեծ դրսևորման դեպքում, երկրորդ դեմքի հետ, բայերը կիրառվել են երրորդ դեմքով: Նման երևույթ հաճախակի կարելի է հանդիպել հայկական հեքիաթներում՝ թագավորներին դիմելիս, ինչպես օրինակ՝

Ձերդ մեծությունը **կամենում է**

Վերջինը բացատրվում է այն հանգամանքով, որ հարգանքի անսահման մեծ չափ արտահայտելու համար, ընդգծված կերպով տրվում էր անգամ տարածական հեռավորություն: Երկրորդ դեմքի դերանվան հետ բայը դրվում էր երրորդ դեմքով՝ հիերարխիկ համակարգի առավել վառ արտահայտման համար, ինչը հայկական իրույթ է ու մշակույթ: Հետևաբար, իսպաներենի վերոնշյալ դերանունները հայերենի հետ զուգադրելով, հայ ուսանողն առավել արագ է ընկալում դրանց կիրառումը՝ երրորդ դեմքով դրված բայերի հետ: Այստեղ հարկ է նշել, որ անձնական դերանունները դասավանդելիս, ցանկալի է նաև, հայերենի հետ զուգադրելով, բացատրել, որ ուղղական հոլովի դերանունները շատ հաճախ չեն կիրառվում, քանի որ բայի խոնարհման համակարգն իսպաներենում ունի դեմքը ցուցելու առավելություն: Ինչպես, օրինակ՝

1. Vivo en Madrid con mi marido.
2. Hablaste con Miguel anteayer.
3. Fuimos al cine juntos.

Նշված օրինակներում, առաջինում՝ բաց է թողնված **yo** անձնական դերանունը, երկրորդում՝ **tú**, իսկ երրորդում՝ **nosotros** անձնական դերանունները: Նույն քերականական երևույթն առկա է նաև հայոց

լեզվում: Դիտարկենք նույն նախադասությունների հայերեն թարգմանությունը՝

1. Ամուսնուս հետ ապրում եմ Մադրիդում:
2. Միգելի հետ խոսեցիր երեկ:
3. Միասին գնացինք կինո:

Հայերենում, անձնական դերանունների անհարկի կիրառումից խուսափելու համար, համապատասխանաբար, առաջին նախադասության մեջ բաց է թողնված **ես** դերանունը, երկրորդում՝ **դու**, իսկ երրորդում՝ **մենք** դերանունները: Ինչպես կարելի է նկատել բերված օրինակներից, հայերենում նույնպես, բայն ունի ճկուն համակարգ և կարող է արտահայտել դեմք՝ առանց դերանվան, ինչը փաստացի անհնար է անգլերենի պարագայում: Այս դեպքում, կրկին, կիրառելով գուգադրական մեթոդը հայալեզու լսարանում, կարելի է հասնել առավելագույն արդյունքի:

Քերականական նշված նյութի դասավանդման ժամանակ, անխոս, բացի վերոհիշյալ մեթոդներից, արդյունավետություն կապահովին սան հաղորդակցական մեթոդը: Հաղորդակցական ու միջմշակութային հայեցակարգերով, համատեքստային տարբեր գործնական առաջադրանքներով ավելի կամրապնդի արդեն սովորած քերականական նյութը:

Իսպաներենում, անձնական դերանուններն ուսանողներին ներկայացնելիս, առանջնային է խոսել ու ներկայացնել դրանց

անդրադարձ ձևերը (me, te, se, nos, os, se), որոնք կարևոր են, հատկապես, անդրադարձ բայերի ճիշտ կիրառման համար: Վերջինների խոնարհումը թյուրըմբռնում է առաջացնում հայ ուսանողների համար, ինչից խուսափելու նպատակով, ցանկալի է կիրառել դասավանդման ինտերակտիվ մեթոդը ու գործնական վարժություններով՝ ամրապնդել դրանց իմացությունը: Ցանկալի է նաև կիրառել պատկերներ և բացատրել հայերենի վերաբերական դերանունների տարբերությունն ու գործածությունը:

Իսպաներենի անձնական դերանունները հայալեզու լսարանում բացատրելիս, անհրաժեշտություն է առաջանում մանրակրկիտ ու հանգամանալից անդրադարձ կատարել ուղիղ խնդրի դեր կատարող դերանուններին, քանի որ այն համարվում է իսպաներենի քերականության ոչ դյուրին թեմաներից: Իսպաներենում դրանք հետևյալ դերանուններն են՝

Me	Nos
Te	Os
Le, la	Les, las
Lo, la	Los, las

Այս դերանունները ներկայացնելիս, անհրաժեշտաբար պետք է ծանոթացնել **leísmo**-ի երևույթին, երբ **le** և **les** անուղղակի խնդիր դերանունները կիրառվում են **lo**, **la**, **los**, **las** ուղիղ խնդիր դերանունների փոխարեն, ինչը բավականին տարածված է

Իսպանիայի մի շարք բարբառային խոսույթներում: Հաջորդաբար, ներկայացնել **laísmo**-ի երևույթին, որը տեղի է ունենում, երբ անուղղակի **le** և **les** խնդիր դերանունների փոխարեն, կիրառվում են **la** և **las** դերանունները: Այնուհետև, անդրադառնալ **loísmo**-ի երևույթին, երբ **le** և **les** անուղղակի խնդիր դերանունների փոխարեն կիրառվում են **lo** և **los**, ինչը, Իսպանիայի թագավորական ակադեմիայի տվյալների համաձայն, համարվում է իսպաներենի վուլգար տարբերակ:

Նշված անձնական դերանունների մասին խոսելիս, պետք է հաշվի առնել նաև դրանց կիրառման ձևն ու պարզաբանելով մանրամասն բացատրել այն, քանի որ, ինչպես հայտնի է, բայի անդեմ ձևի (**Infinitivo**) հետ կիրառվելիս, դրանք դրվում են բայից հետո և գրվում են բային կցված, ինչպես օրինակ՝ **tenerlo, conocerle, comprarlas, dárselo, invitarme, amarte** և այլն: Խոնարհված բայի դեպքում, քերականական կանոնի համաձայն, վերոնշյալ դերանունները դրվում են բայից առաջ և գրվում են բայից անջատ, ինչպես օրինակ՝ **me gusta, te llamo, nos piden, le mando, lo hago, os complace** և այլն:

Ցանկալի է լսարանում նշված թեման ներկայացնելուց հետո, աշխատել փոխակերպման գրավոր վարժություններով՝ ընդգրկելով իսպանական գործնական նյութեր: Այնուհետև, արդեն սերտած թեման ամրապնդել տեսալսողական նյութերով, գործնական ու հաղորդակցական տարբեր վարժանքներով, կազմակերպելով երկխոսություններ ու քննարկումներ:

Հայալեզու լսարանում իսպաներենի անձնական դերանունների դասավանդումը պահանջում է յուրահատուկ մոտեցում՝ իսպաներենի ու հայերենի կառուցվածքային ու գործնական տարբերությունների տեսանկյունից: Դասավանդման գործընթացում, կիրառելով՝ գուգադրական, հադորդակցական, ինդուկտիվ ու ինտերակտիվ մեթոդները, անհրաժեշտ է հաշվի առնել նաև ազգամշակութային բաղադրիչը, ինչը կնպաստի իսպաներենի անձնական դերանունների ավելի խորը ըմբռնմանը ու ճիշտ կիրարկմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. García, M. (2017). La enseñanza del español como lengua extranjera: reflexiones y desafíos. *Revistade Lenguas para Fines Específicos*, 23(2), pp. 7-24.
2. Lázaro Mora, R. (2009). Tratamiento pronominal en el aula de ELE: ¿Usted o tú? *Revista MarcoELE*, n.9.
3. López Moratalla, N. (2004). La enseñanza de los usos de los pronominales del español. *Didáctica (Lengua y Literatura)*, 16, 73-88.
4. Martínez, A. (2014). Métodos y enfoques en la enseñanza del español como lengua extranjera.
5. Peris Martín, E. (2000). La enseñanza centrada en el alumno. Algo más que una propuesta políticamente correcta. *Frecuencia-L*, 13, pp. 3-30.

6. Richards, J.C. and Rodgers, T.S. (2014) *Approaches and Methods in Language Teaching*.(3rd ed.)
7. Thornburry, Scott. (1999). *How to Teach Grammar*.
8. Рыжкина, И. Б.(2009). Коллаж как средство и способ организации межкультурного диалога. *Русский язык и межкультурная коммуникация*, 8(1), сс.24-28.